



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

„24„ դեկտեմբերի 2015թ.

թիվ 97-Ա

**ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Արտաշատի քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 24-ի հերթական նիստի օրակարգը՝

1 /98-Ն/. ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՑՈՒՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. Մ.ՄԵԼԻՔՅԱՆ/

2/99-Ա/. 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՂՔԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԽՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՈՒՄ ԱՌԱՋ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ, ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. Մ.ՄԵԼԻՔՅԱՆ/

3 /100-Ն/. ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. Ա.ԻՍՐԱՅԵԼՅԱՆ/

4 /101-Ա/. ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. Ա.ԻՍՐԱՅԵԼՅԱՆ/

5 /102-Ա. ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա.ԻՍՐԱՅԵԼՅԱՆ/

6 /103-Ա. ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 28-Ի՝ „ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՍՓԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,, ԹԻՎ 57-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՐԱՑՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ/

7 /104-Ն. ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Մ.ՄԵԼԻՔՅԱՆ/

8 /105-Ա. ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 18.11.2015 ԹՎԱԿԱՆԻ՝ „ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՄԱՐՔՄԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 7 ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԹԻՎ 15 ԲՆԱԿԱՐԱՆԸ՝ 76,6 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎԵՏԻՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ, ՍՎԵՏԻԿ ՄԱՆԱՍԵՐՅԱՆԻՆ, ԵՐԱՆՈՒՉԻ ԱՎԱԳՅԱՆԻՆ, ԳԱՅԱՆԵ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,, ԹԻՎ 81-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա.ԻՍՐԱՅԵԼՅԱՆ/

9 /106-Ա. ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 18.11.2015 ԹՎԱԿԱՆԻ՝ „ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 26 ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԹԻՎ 12 ԲՆԱԿԱՐԱՆԸ՝ 59,73 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՄԱՅՐԱՆՈՒՇ ՄՈՒՇՈՒԼՈՎԱՅԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,, ԹԻՎ 82-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա.ԻՍՐԱՅԵԼՅԱՆ/

10/107-Ա. ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Կ.ՊՈՂՈՍՅԱՆ/

11 /108-Ա. ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ՄԻԱԼԻ ՉԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Կ.ՊՈՂՈՍՅԱՆ/

12 /109-Ն/. ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Կ.ՊՈՂՈՍՅԱՆ/

13 /110-Ն/. ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Կ.ՊՈՂՈՍՅԱՆ/

14 /111-Ա/. ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԻՍԱԿՈՎ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 36 Ա ՏԱՆ ԲՆԱԿԻՉ ՀԱՄԼԵՏ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆ/

15 /112-Ա/. ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 23 ՏԱՆ ԲՆԱԿՉՈՒՀԻ ՄԱՐԻԱՄ ԽԱԶԱՏՐՅԱՆԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆ/

16 /113-Ա/. ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 60 ՏԱՆ ԲՆԱԿՉՈՒՀԻ ՄԵՂԱ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆ/

17 /114-Ա/. ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 51 ՏԱՆ ԲՆԱԿՉՈՒՀԻ ՄԵՂԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆ/

18 /115-Ա/. ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 17 ՏԱՆ ԲՆԱԿԻՉ ՎԱՆԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆ/

19 /116-Ա/. 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԻ ՏՈՆԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՈՒՄՆ ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ, ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Մ.ՄԵԼԻՔՅԱՆ/

20 /117-Ն/. ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. Մ.ՄԵԼԻՔՅԱՆ/

21 /118-Ա/. ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1 ՇԵՆՔԻ ՏԱՆԻՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՈՒՄՆ ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ, ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԻՐԱԿԱՆԱՅՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. Մ.ՄԵԼԻՔՅԱՆ/

Կողմ - 13

դեմ-0

ձեռնպահ-0

-  Ավետիսյան Հերմոն
-  Բենիամինյան Կարեն
-  Դերմոյան Արման
-  Թադևոսյան Արման
-  Կիրակոսյան Գրիգոր
-  Հայրապետյան Ռուզան
-  Հովհաննիսյան Վազգեն
-  Մելքոնյան Վանիկ
-  Մնացականյան Հարություն
-  Նազարյան Կոտ
-  Պողոսյան Գաբրիել
-  Վարդապետյան Վաչագան
-  Վարդանյան Ռուզմիկ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ



ԱՐԿԱՄ ԱՐՈՒԱՄՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

„24„ դեկտեմբերի 2015թ.

ԹԻՎ 98-Ն

**ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱՌՍԱՅԻՆ ՄԱՍԵՐԻ
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Համաձայն „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասին, „Բյուջետային համակարգի մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի ու 28-րդ հոդվածի.

Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Արտաշատի քաղաքային համայնքի 2015 թվականի բյուջեի եկամտային և ծախսային մասերի առաաջարկվող փոփոխությունները՝

1. Թույլատրել Արտաշատի քաղաքային համայնքի բյուջեի եկամտային մասի՝
 - այլ եկամուտներ /900415151092/ եկամտային հաշիվը պակասեցնել 20359830 /քսան միլիոն երեք հարյուր հիսունինը հազար ութ հարյուր երեսուն/ դրամով.
 - այլ գույքի վարձակալությունից մուտքեր /900415151142/ եկամտային հաշիվը պակասեցնել 2000000 /երկու միլիոն / դրամով.
 - գյուղատնտեսական նշանակության հողի համար հողի հակ /900415151019/ եկամտային հաշիվը պակասեցնել 1000000 /մեկ միլոն / դրամով.
 - պետական տուրք ԶԱԳՍ /900415151274/ եկամտային հաշիվը պակասեցնել 500000 /հինգ հարյուր հազար/ դրամով.
 - պետ.տուրք նոտար /900415151191/ եկամտային հաշիվը պակասեցնել 4000000 /չորս միլիոն/ դրամով.
 - աճուրդ վաճառք կազմակերպելու համար /900415151126/ եկամտային հաշիվը պակասեցնել 500000 /հինգ հարյուր հազար/ դրամով.
 - ինքնակամ շինությունների օրինակահար /900415151159/ եկամտային հաշիվը պակասեցնել 400000 /չոր հարյուր հազար/ դրամով.
 - մուտքեր վարչական իրավախախտումների համար տուգանքներից և պատժամիջոցներից /900415151472/ եկամտային հաշիվը պակասեցնել 100000 /մեկ հարյուր հազար/ դրամով.

- գույքահարկ անհատ ձեռնարկատերերից և քաղաքացիներից փոխադրամիջոցների համար 900415151043 եկամտային հաշիվը ավելացնել 5500000 /հինգ միլիոն հինգ հարյուր հազար/ դրամով.
- հողի օտարումից եկամուտներ /900415151068/ եկամտային հաշիվը պակասեցնել 27231900 /քսանյոթ միլիոն երկու հարյուր երեսունմեկ հազար ինը հարյուր/ դրամով.
- այլ հիմնական միջոցների օտարումից մուտքեր /900415151209/ եկամտային հաշիվը պակասեցնել 1237000 /մեկ միլիոն երկու հարյուր երեսունյոթ հազար/ դրամով:

2. Թույլատրել Արտաշատի քաղաքային համայնքի բյուջեի ծախսային մասի ա/01.01.01.51 գործառնական դասակարգման /կառավարման մարմնի պահպանում/

- 4111 հողվածը պակասեցնել 4500000 /չորս միլիոն հինգ հարյուր հազար/ դրամով.
- 4212 հողվածը պակասեցնել 2855232 /երկու միլիոն ութ հարյուր հիսունհինգ հազար երկու հարյուր երեսուներկու/ դրամով.
- 4213 հողվածը պակասեցնել 279625 /երկու հարյուր յոթանասունինը հազար վեց հարյուր քսանհինգ/ դրամով.
- 4214 հողվածը պակասեցնել 75874 /յոթանասունհինգ հազար ութ հարյուր յոթանասունչորս/ դրամով.
- 4215 հողվածը պակասեցնել 31000 /երեսունմեկ հազար / դրամով.
- 4221 հողվածը պակասեցնել 65000 /վաթսուհինգ հազար/ դրամով.
- 4235 հողվածը պակասեցնել 180000 /մեկ հարյուր ութսուն հազար/ դրամով.
- 4237 հողվածը պակասեցնել 367400 /երեք հարյուր վաթսույոթ հազար չորս հարյուր/ դրամով.
- 4252 հողվածը պակասեցնել 919800 /ինը հարյուր տասնինը հազար ութ հարյուր/ դրամով.
- 4261 հողվածը պակասեցնել 270000 /երկու հարյուր յոթանասուն հազար/ դրամով.
- 4264 հողվածը պակասեցնել 1809700 /մեկ միլիոն ութ հարյուր ինը հազար յոթ հարյուր/ դրամով.
- 4823 հողվածը պակասեցնել 90650 /իննսուն հազար վեց հարյուր հիսուն/ դրամով.
- 5122 հողվածը պակասեցնել 891000 /ութ հարյուր իննսունմեկ հազար/ դրամով.

բ/ 11.01.02.51 գործառնական դասակարգման /վարչական բյուջեի պահուստային ֆոնդ/ 4891 հողվածը պակասեցնել 9637379 /ինը միլիոն վեց հարյուր երեսունյոթ հազար երեք հարյուր յոթանասունինը/ դրամով.

գ/ 01.06.01.52 գործառնական դասակարգման /գույքի նկատմամբ իրավունքների գրանցում և տեղեկատվության տրամադրում/

- 4241 հողվածը պակասեցնել 425000 /չորս հարյուր քսանհինգ հազար/ դրամով.
- 4823 հողվածը պակասեցնել 500000 /հինգ հարյուր հազար/ դրամով.

դ/ 01.06.01.51 գործառնական դասակարգման /դիմումներ, հայցադիմումներ, դատական վճիռներ/ 4823 հողվածը պակասեցնել 438170 /չորս հարյուր երեսունուր հազար հարյուր յոթանասուն/ դրամով.

ե/ 10.07.01.55 գործառնական դասակարգման /հասարակական կազմակերպություններիին աջակցություն/ 4819 հողվածը պակասեցնել 510000 /հինգ հարյուր տաս հազար/ դրամով.

զ/ 08.02.04.51 գործառնական դասակարգման /մշակութային միջոցառումների իրականացում/ 4239 հոդվածը պակասեցնել 405000 /չորս հարյուր հինգ հազար/ դրամով.

է/ 11.01.02.52 գործառնական դասակարգման /ֆոնդային բյուջեի պահուստային ֆոնդ/ 4891 հոդվածը պակասեցնել 18970000 /տասնութ միլիոն ինը հարյուր յոթանասուն հազար/ դրամով.

ը/ 05.01.01.51 գործառնական դասակարգման /աղքատաբարձություն և սանիտարական մաքրում/ 5129 հոդվածը պակասեցնել 81000 /ութսունմեկ հազար/ դրամով.

թ/ 08.01.01.52 գործառնական դասակարգման /հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում/5112 հոդվածը պակասեցնել 7500000 /յոթ միլիոն հինգ հարյուր հազար/ դրամով.

ժ/ 06.04.01.51 գործառնական դասակարգման /արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում/ 5134 հոդվածը պակասեցնել 119980 /մեկ հարյուր տասնինը հազար ինը հարյուր ութսուն/ դրամով.

լ/ 04.05.01.51 գործառնական դասակարգման /ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում/ 5113 հոդվածը պակասեցնել 906920 /ինը հարյուր վեց հազար ինը հարյուր քսան/ դրամով:

Կողմ - 13

դեմ-0

ձեռնպահ-0

Ավետիսյան Ներսես

Բենիամինյան Գարեն

Ղերմոյան Արման

Թադևոսյան Արման

Գիրանդայան Գրիգոր

Հայրապետյան Ռուբեն

Հովհաննիսյան Կազգեն

Մելքոնյան Կանինկ

Մնացականյան Հարություն

Նազարյան Գոռ

Պողոսյան Գաբրիել

Վարդապարյան Վաչագան

Վարդանյան Ռազմիկ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱԳԵՏ՝



ԱՐԳԱՄ ԱՐԴԱՂԱՄՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

„24„ դեկտեմբերի 2015թ.

ԹԻՎ 99-Ա

**2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՂՔԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ
ՄԱՔՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՈՒՄՆ ԱՌԱՆՑ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ
ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ, ԲԱՆԱԿՑԱՑԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՑԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ Արտաշատի քաղաքապետարանը հանդիսանում է „Արտաշատի կոմունալ տնտեսություն„ ԲԲԸ-ի բաժնեմասի 34.0 % բաժնետերը, իսկ „Արտաշատի կոմունալ տնտեսություն„ ԲԲԸ-ն հանդիսանում է տարածաշրջանի միակ մասնագիտացված կազմակերպությունը և ղեկավարվելով „Աղբահանության և սանիտարական մաքրման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքով, ինչպես նաև „Գնումների մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ կետի 1-ին ենթակետով.

Քաղաքային համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Թույլատրել 2016 թվականի Արտաշատ քաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների գնումը կատարել բանակցային ընթացակարգ առանց հայտարարության ընթացակարգով:

Կողմ - 13

 Արսեն Ավակյանի շեքստ
 Արսեն Ավակյանի Գարեկ
 Արսեն Ավակյանի Արման
 Արսեն Ավակյանի Թադևոսյան Արման
 Արսեն Ավակյանի Կիրակոսյան Գրիգոր
 Արսեն Ավակյանի Հայրապետյան Ռուզան
 Արսեն Ավակյանի Հովհաննիսյան Վազգեն
 Արսեն Ավակյանի Մելքոնյան Վանիկ
 Արսեն Ավակյանի Մազաչևսյան Հայրություն

դեմ 0
 Անոնյան 0

Քաղաքացիական Գրոհ
Պողոսյան Գաբրիել
Մարտիրոսյան Կապույան
Վարդանյան Ռազմիկ

ԱՐՏԱՆՍԻ ՔԱՂԱՔԱԳԵՏ՝



ԱՐԳԱՄ ԱՐՈՒԱՄՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

„24„ դեկտեմբերի 2015թ.

ԹԻՎ 100-Ն

**ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ
ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով „Տեղական տուրքերի և վճարների մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքով.

Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Արտաշատի քաղաքային համայնքում 2016 թվականի համար սահմանել տեղական տուրքերի հետևյալ տեսակներն ու դրույքաչափերը՝

1/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ օբյեկտության համար տեղական տուրքը սահմանել՝

հիմնական օբյեկտների համար՝

ա/ մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամատանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ,

բ/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա/ 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ,

բբ/ 501-ից մինչև 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ,

բգ/ 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100000 դրամ;

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ/ մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ,

դ/ 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:

2/ Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /քաղաքային Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, երև
սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային
չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի
ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության
փոփոխություն, տեղական տուրքը սահմանել՝ 3000 դրամ.

բ/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ
արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների,
վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ
թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ
սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա»
ենթակետով սահմանված դրույթաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության
համար սույն որոշման I/-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր
մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության
մասով.

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի
գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/
շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա,
օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ
կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման I/-ին կետով սահմանված
նորմերը:

3/ Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, բաղադրաշինական այլ
օբյեկտների բանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 5000 դրամ:

4/ Համայնքի տարածքում՝

ա/ ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝
հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման
դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 7000 դրամ

բ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ
հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում
յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 7000 դրամ

5/ Համայնքի տարածքում՝ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար
տեղական տուրք յուրաքանչյուր 1 քմ-ի համար սահմանել 100 դրամ .

6/ Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ
հեղուկացված հավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ
վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված հավթային գազերի
և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական
տուրքը սահմանել 150000 դրամ

7/ Համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական
հեղուկների վաճառքի թույլտվություն տալու համար տեղական տուրքը սահմանել
50000 դրամ:

8/ Համայնքի տարածքում բանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ
առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 50000 դրամ:

9/ Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և
վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները
ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

ա/ առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ.

- բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 75000 դրամ.
- գ/ բաղնիքների /սաունաների/ համար՝ 200000 դրամ.
- դ/խաղատների կազմակերպման համար՝ 500000 դրամ.
- ե/ շահուճով խաղերի կազմակերպման համար՝ 250000 դրամ .
- զ/վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 դրամ.

10/ Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրք յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

- ա/ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 6000 դրամ.
- բ/ ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000 դրամ:

11/ Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ բառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

- ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությամբ մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.
- բ/ բունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3000 դրամ.
- գ/ այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.
- դ/ դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ.

12/ Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը սահմանել 2000 դրամ:

13/ Համայնքի տարածքում մարդատար տարսու /բացառությամբ երթուղային տարսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 5000 դրամ:

14/ Հայաստանի Հանրապետության Արարտի մարզի Արտաշատի քաղաքային համայնքի անվանումը ֆինանսյին անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 50000 դրամ:

15/ Համայնքային կանոնների համապատասխան քաղաքային համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար տեղական տուրք, ընթացիկ տարվա համար չսահմանել.

16/ Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և /կամ/ մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 250000 դրամ:

2. Արտաշատի քաղաքային համայնքում 2016 թվականի համար սահմանել տեղական վճարների հետևյալ տեսակներն ու դրույքաչափերը՝

- 1/ Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկա-

տնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 10000 դրամ:

2/ Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 2000 դրամ

3/ Համայնքի կողմից աճուրդներ և մրցույթներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել 15000 դրամ:

4/ Համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար սահմանել աղբահանության վճար

ա/ Կենցաղային աղբի համար ըստ համայնքում հաշվառված անձանց քանակի՝ անձնագրային կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և /կամ/ փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար սահմանել 100 դրամ.

բ/ համայնքի տարածքում գործող հասարակական, արտադրական, առևտրի, սպասարկման և այլ օբյեկտների համար կենցաղային և ոչ կենցաղային աղբի աղբահանության վճար սահմանել յուրաքանչյուր 1 քմ-ի համար 25 դրամ.

գ/ Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

գա/ ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար 1500 դրամ.

գբ/ ըստ զանգվածի մեկ տոննա աղբի համար 5000 դրամ.

Աղբահանության վճարի հաշվարկային հաշվետու ժամանակահատվածը համարել օրացուցային ամիսը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Դեղձ - 13

դեմ-0

ձեռնպահ-0

Ավետիսյան Հերմոն

Բենիամինյան Դարեն

Դերմորան Արման

Թադևոսյան Արման

Վիքրակոսյան Գրիգոր

Չալոսյան Ռուզան

Հովհաննիսյան Վազգեն

Մեղրույան Վանիկ

Մնացականյան Հարություն

Նազարյան Գոռ

Պողոսյան Գարրիկ

Վարդապետյան Վաչագան

Վարդանյան Ռազմիկ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱԳԵՏ՝



ԱՐԳԱՄ ԱՐԲԱՆԱՍԵԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

„24„ դեկտեմբերի 2015թ.

թիվ 101-Ա

**ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՆՐԻՍԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ
2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ մասով.

Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Արտաշատի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող հիմնական և շրջանառու միջոցների 2015 թվականի գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն թիվ 1 և թիվ 2 հավելվածների:

-  Կողմ - 13
-  Ավետիսյան Հերմոն
-  Բենիամինյան Կարեն
-  Դերմոյան Արման
-  Թադևոսյան Արման
-  Կիրակոսյան Գրիգոր
-  Հայրապետյան Ռուզան
-  Հովհաննիսյան Վաղդինե
-  Մելքոնյան Վանիկ
-  Մնացականյան Հայրություն
- Նազարյան Գոռ
- Պողոսյան Գաբրիել
- Վարդապարտյան Վաչագան
- Վարդանյան Ռազմիկ

դեմ-0

ձեռնպահ-0

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝



ԱՐԳԱՄ ԱՐԴԱՄԱՍՅԱՆ

Հավելված թիվ 1

Արտաշատի քաղաքային համայնքի ավագանու
2015թ. դեկտեմբերի 24-ի թիվ 101-Ա որոշման

Ց ՈՒ Ց Ա Կ

Արտաշատի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող հիմնական և շրջանառու միջոցների 2015 թվականի գույքագրման արդյունքների

№	Հիմնական միջոցների անվանումը	Արժեքը /ազ. դրամներով/		
		Հիմնական միջոցներ	Շրջանառու միջոցներ	Ընդամենը
1	Իսակույի նախկին ՊԳՏԶ-ի վարչական շենք և կից կառույցներ	1130,0		1130,0
2	„Թիվ 1 մանկապարտեզ,, ՀՈԱԿ-ի շենք,	18008,7		18008,7
3	„Թիվ 2 մանկապարտեզ,, ՀՈԱԿ-ի շենք,	1588,5		1588,5
4	„Թիվ 3 մանկապարտեզ,, ՀՈԱԿ-ի շենք,	55425,7		55425,7
5	„Թիվ 4 մանկապարտեզ,, ՀՈԱԿ-ի շենք,	22072,8		22072,8
6	„Թիվ 5 մանկապարտեզ,, ՀՈԱԿ-ի շենք,	15453,4		15453,4
7	„Թիվ 6 մանկապարտեզ,, ՀՈԱԿ-ի շենք,	8811,3		8811,3
8	„Թիվ 7 մանկապարտեզ,, ՀՈԱԿ-ի շենք,	1993,8		1993,8
9	„Թիվ 8 մանկապարտեզ,, ՀՈԱԿ-ի շենք,	29880,2		29880,2
10	„Թիվ 9 մանկապարտեզ,, ՀՈԱԿ-ի շենք,	21852,6		21852,6
11	„Մելիք Փաշանի անվ. երաժշտ. դպրոց,, ՀՈԱԿ-ի շենք,	19000,5		19000,5
12	„Արտադպրոցական աշխ. կենտրոն,, ՀՈԱԿ-ի շենք,	70432,4		70432,4
13	„Արտաշատ քաղաքի մանկապատանեկան համալիր մարզադպրոց,, ՀՈԱԿ-ի շենք,	39516,7		39516,7
14	„Արտաշատ քաղաքի ընթացակրթության կենտրոնի մարզադպրոց,, ՀՈԱԿ-ի շենք,	150199,3		150199,3
15	Շահումյան 14 շենք /1-ին հարկի տարածք/, թիվ 2 մշակույթի տուն	802,5		802,5
16	„Շառլ Ազնաւուրի անվ.մշակույթի կենտրոն,, ՀՈԱԿ-ի շենք	162000,0		162000,0
17	„Արտաշատի բնակարանային տնտեսություն,, ՓԲԸ-ի գույք. Արագի փողոցի վրա գտնվող վարչական շենք	6820,0	-	6820,0
18	Աթարբեկյան թիվ 156ա . բնակելի շենք	21937,3	-	21937,3
19	Աթարբեկյան թիվ 156բ . բնակելի շենք	60794,3	-	60794,3
20	Մխչյան 119/80/. բնակելի շենք	51610,0	-	51610,0
21	Երկաթգծի դիսպ. շենք և կից կառույց /Շահումյան թիվ 2. վերածված հանրակացարանի/	5345,6	-	5345,6
22	Նախկին „Նոյ,, ֆաբրիկայի մանկապարտեզի շենք	2439,0	-	2439,0
23	Նախկին տրեստի բնակելի անավարտ շենք /Օրբելի փող. թիվ 95/	20,0	-	20,0
24	Պատանի տեխնիկների կայան /Լուսինյան փողոց/	265,8	-	268,8
25	Քաղաքապետարանի շենք	34092,9	-	34092,9
26	Հողի արժեք	898,2	-	898,2
27	Իսակույի նախկին դպրոցի շենք	789,7	-	789,7
28	Իսակույի նախկին մանկապարտեզի շենք /Աճառյան 44/	505,7	-	505,7
29	Իսակույի նախկին անասնաբուժարանի շենք	139,7	-	139,7
30	Իսակույի նախկին ֆերմայի շենք	1523,3	-	1523,3
31	„Նոյ,, կարի ֆաբրիկայի նախկին մանկապարտեզի օժանդակ շինություն	535,1	-	535,1

